

## ԲԱՂՋԱԼԻ ԱՐՇԱԼՈՅՄ

**Կ**ատարուեց երկար տարիների իղձը. կատարուեց Հայաստանեայց եկեղեցու մաքուր և անկաշառ բարեկամների ցանկութիւնը, որի ժաման եօթանասնական թուականներից արգեն խորհում էին լաւագոյն հայ գործիչները: Այն միակ հաստատութիւնը, որ դարերից ի վեր հասել էր մեզ իրքեւ ամենամեծ ժառանգութիւն և պատուական մարդարիտ, որը պահպանել էր ամբողջ ազգը անդառնալի կորստից, մի քանի արտաքին հանգամանքների շնորհիւ դարձել էր մի տեսակ բիւրօկրատիական հաստատութիւն և դադարել հայ ժողովրդի կամքի և կարկանդական հայելի լինելուց: Հայաստանեայց եկեղեցին քիչ էր նմանւում հաւատացեալների ժողովի, նրա հոգեորականները բազմաթիւ դէպքերում փոխանակ ժողովրդի կարիքներին ծառայելու և պահանջներն աշքի առաջ ունենալով, նրա իղձերով և ցաւերով ապրելու, դարձել էին մի մի վարչական պաշտօնեայ և աշխատում էին հաճելի լինել իրենց զօրաւոր ընկերակիցներին և գրանիկներին: Կար ժամանակ, որ միտք յզացուեց մացնելու կեդրոնացումն, անարժան ձեռքերի մէջ հաւաքելու եկեղեցու գործերը և շնորհիւ այդ հանգամանքի ժողովրդի իրաւունքներն հետզհետէ աւելի և աւելի կրծատուեցին և հոգեորականութեան ու ժողովրդի մէջ սկսուեց անջատումն, բացուեց մի վիճ, որը հետզհետէ սպառնում էր մեծանալ և վտանգ սպառնալ քրիստոնէական եկեղեցիների մէջ ամենառամկավարական Հայաստանեայց եկեղեցուն: Մարմինը սկսել էր հիւանդանալ և հետզհետէ վատանալ և թէև հիւանդութիւնը յայտնի և միջոցները պարզ էին, այնուամենայնիւ արտաքին և ներքին բազմաթիւ հանգամանքներն արգելում էին դիմել արմատական բժշկութեան, չկար խնամատար մի ձեռք. մասսան լուռ էր, իսկ անձնուէր անհատների բարեկամական ցաւակից ձայնը խեղդւում էր եսականների

գուռամ գոչումի և ճնշման ներքոյ:

Այդպիսով ա. Եղմիածնի անմիջական իրաւասութեան ներքոյ եղած թեմերն ու վիճակներն՝ իրենց կոլեգիալ հաստատութիւններով անցնում էին այնպիսի մարդկանց ձեռքը, որոնց ժողովուրդը կամ բոլորովին չէր ճանաչում և կամ ատում էր: Այս, առաջնորդական և փոխանորդական աթոռների վրայ բազմում էին մարդիկ, որոնց մասին ժողովուրդը դժուար թէ համաձայնէր ցանկալի վկայութիւնը տալ: Եւ ժողովուրդը զայրանում էր, եկեղեցուց ստոչում, կասկածով վերաբերում դէպի եկեղեցու գլուխը և նրա կարգադրութեանց, չը նայելով որ այդ բոլորը մեծաւ մասամբ կատարւում էր կամ զօրաւոր բիւրօկրատների, կամ դրանիկներից մէկն ու մէկի զեկուցման և ցանկութեան համաձայն: Այդպիսի դէպերում նպատակին հասնելու բոլոր միջոցները սուբը էին համարւում. իրար առաջ ոտք դցելը սովորական երևոյթ էր դարձել և հեռագիրներով պաշտօնեաներ և շատ անգամ լաւագոյն պաշտօնեաներ արձակելն ու անարժաններով փոխանակելը սովորական երևոյթ էր: Հայաստանեայց եկեղեցին պահպանել էր մի միայն քահանաների և Հայրապետի ընտրութեան իրաւունքը, իսկ դորձակալ, յաջորդ, առաջնորդ, հոգեոր կառավարութեան, կոնսիստորիայի և Սինոդի անդամները մնում էին նշանակովին: Թէև նրանց մէջ յաճախ պատահում էին վարկաբեկ անձինք, թէև ժողովուրդը տրտնջում և իւր դժոնութիւնը փոխադրում էր և եկեղեցու վրայ, այնուամենայնիւ այդ նշանակովի անձինք ժողովրդին պնդում էին նրա ռամկավարական ընաւորութեան մասին և ցոյց տալիս մի քանի պաշտօնեաներին ընտրելու ժողովրդին վերապահուած իրաւունքը:

Սակայն ժամանակն անողոք շարունակում էր իւր ընթացքն արտգ թափով, հիւանդութիւնն աւելի և աւելի սաստկանում և դարման էր խնդրում և հարկաւոր էր մի դթուտ, վճռողական ձեռք՝ շարիքն արմատից կտրելու:

Վերջապէս հասաւ այդ ցանկալի ժամը և նա, որին աղգը իւր միաձայն քուէյով հաւատացել էր իւր դարաւոր

ժառանգութիւնը, Նա, որի անուան հետ կապուած էին հայ ժողովրդի լաւագոյն իղձերը, որին հայրապետական աթոռ կոչելիս՝ այդ ժողովուրդը մի շունչ և մի մարմին էր դարձել և իւր անսահման ոգեսորութեամբ տեսնողին զարմանք էր ազդում, այս, Նա վճռեց ազատել եկեղեցին նրա ոգուն խորթ իշխանաւորական կարգերից ու սովորութիւններից և ամսոյս 10-ին իւր հայրապետական սրբատառ կոնդակով վերականգնեց նրա դարերով սրբագործուած ընտրական իրաւունքը բոլոր պաշտօնէից վերաբերութեամբ, փոխանակ անհատների յաճախ անարդար վկայութեան, ուղեց լսել իւր սիրած ժողովրդի ձայնն ու կարծիքը:

Իրաւամբ կարելի է ասել, որ մայիսի 10-ը մեր եկեղեցու վերածնութեան համար դարագլուխ է և մի պայծառ էջ մեր վերջին տարիների տիսուր և արիւնոտ պատմութեան մէջ։ Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այդ կոնդակով սրբագործում է մեր նոր լեզուն և մոցւում ընդհանուր անմիջական ձայնատւոթիւն, որով հնար պէտք է լինի լսել ժողովրդի խոկական ձայնը։ Այս, հայ ժողովուրդը վերստացաւ իւր կորսուած իրաւունքը և մեր սերունդները՝ այդ նշանաւոր տօնը տօնելիս՝ տռանձին ոգեսորութեամբ կը յիշէն նորին Սրբութեան՝ Հայոց Հայրիկի անունը, որն անկատար չը թողեց իւր սրտի փափագը և արձագանք տուաւ ժամանակին ու նրա հասունացած պահանջներին։

Իսկ մեզ, մեր ազգային նըմարիս ժողովրդական եկեղեցու զաւակներիս մնում է կրթել իրար, կրթել մեր տգէտ եղբայրներին, յարդել նրանց ձայնն ու կարծիքը, խելօքութեամբ ու ազնւութեամբ զեկավարել նրանց և տալով կատարեալ ազատութիւն ընտրական գործում՝ յարդել բազմութեան ձայնը՝ որպէս Աստուծոյ ձայն և ցոյց տալ, որ իրօք մենք հասուն ենք և արժանի այդ մեծ իրաւունքի։